

Հիդրօքսիպրոզեստերոն կապրոատ պարունակող դեղերի շուկայավարման թույլտվության կասեցում

Առողջապահության ոլորտի հարգելի մասնագետներ,

«Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը տեղեկացնում է, որ դեղերի եվրոպական գործակալությունը և ԱՄՆ դեղերի և սննադի վարչությունը կասեցրել են հիդրօքսիպրոզեստերոն կապրոատ պարունակող դեղերի շրջանառությունը:

Հիդրօքսիպրոզեստերոն կապրոատը պրոզեստերոն հորմոնի սինթետիկ համարժեքն է, որն օգտագործվել է գինեկոլոգիայում վաղաժամ ծննդաբերությունը կանխելու համար: Հիդրօքսիպրոզեստերոնը կիրառվել է նաև պրոզեստերոնի անբավարարությամբ պայմանավորված որոշ մենստրուալ խանգարումների ժամանակ և հղիությունը պահպանելու համար:

2023 թվականին Եվրոպայի և ԱՄՆ դեղերի շրջանառությունը կարգավորող կառույցները վերանայել են հիդրօքսիպրոզեստերոն կապրոատ պարունակող դեղերի օգուտ-ռիսկ հարաբերակցությունը բոլոր ցուցումների համար՝ հիմք ընդունելով բազմակենտրոն, կրկնակի կույր ռանդոմիզացված հսկվող հետազոտությունների և համաճարակաբանական ուսումնասիրությունների արդյունքները:

Հայաստանի Հանրապետությունում հիդրօքսիպրոզեստերոն կապրոատ պարունակող դեղերը գրանցվել են 2010 թվականից, ներկայումս գրանցված չեն:

Հիդրօքսիպրոզեստերոն կապրոատ պարունակող դեղերի բոլոր ցուցումների համար պետք է դիտարկել բուժման այլընտրանքային տարբերակներ:

Հիշեցնենք նաև, որ անհրաժեշտ է հաղորդել

դեղերի կիրառման ընթացքում առաջացած կասկածելի կողմնակի ազդեցությունների մասին, ինչը հնարավորություն է տալիս շարունակաբար գնահատել ռիսկ/օգուտ հարաբերակցությունը: Առողջապահության համակարգի մասնագետները կասկածելի կողմնակի ազդեցությունների մասին կարող են առցանց հաղորդել ՀՀ ԱՆ դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն՝ www.pharm.am հղումով կամ զանգահարել թեժ գիծ հետևյալ հեռախոսահամարներով՝ (+374 10) 20 05 05 և (+374 96) 22 05 05: